



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2059

~~1419~~

~~612~~

E
95

թղթական պատճեններ
Դմիտրի Բայրամյանի
Տիգրանի տօնաւոր 1888
Կոմիտասի սրբաւորություն:

1888 Տարի 30.

4
IX-7

ՎԵՄ ԵԿԱՆԻ
Բ. ԵՍԵ ԵԼԵԿԵՆ

4
IX-830



II III

1900-1901
1902-1903

ՆԵՐԵԿԵՆԻ ԸՆԴԵԼԵԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ ՄԱՆԿԱՆՑ
ՎԱՐԺԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒ
ՊՕԼՍՈՅ ՏԵԱՌ ԱՍՏՈՒԱՃՐՈՅ
ՎԵՃԱՓԱՌ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԱՌ ԲՆԹԵՐՅՈՂԱՍ

Ոչէ որ աշխարհի մէջ ամմէն մեղի հանդիպած
բաները՝ իրենց բնական կերպովը երևային՝ լնկե-
րական կենաց մէջ պակասաւոր չի գտնըլելու հա-
մար մեղի պէտք եղած բաները՝ աւելի յօժարութե-
ռւ մտադրութե՝ կը սորվելնիք։ Ասկէց ՚ի զատ առ
հասարակ ամմէն մարդ գոնէ ան նըրամտութին ալ
չունի՝ որ տեսած բաներուն արտաքին երևոյթին չի
խարվելով՝ մինչև անոր ներսը մտնէ ու ի՞նչ ըլլալը
հասկընայ։ Ուստի շատ անգամ անանկ ոչինչ բա-
ներէ կը վախնանիք՝ ու մեղի վախցընել կը սորվեցը-
նեն, որ իրօք սուսերներ են։ ու քիչմը որ վրանին
մտմտալու ըլլանիք՝ աներևոյթ կը լան։ Աս սխալը
նամակ գրելու կտորին մէջ աւելի յայտնի կերևայ։
Արտարև դժբաղդութե՝ գրաւորական կը թութի-
ւը չունեցողները, կամ գոնէ աշխարհային գործքե-
ռու մէջ մանալու չի կը ընալով՝ խելքերնին ու մըտ-
քերնին իրենց բնական խակութեանը ու ժանդին
մէջ թողովները մէկ դի ձգելով, ուսման ետևէ տա-
րիներ անցունողներն ալ տոմսակ մը գրելու ատեն-
նին, թէ որ իրենց սովորական խորհած ու խօսած
նիւթերուն վայ ըլլայ՝ կը շուարին կը միան։

Աս մոտացածին դժուարութե՛ պատճառը՝ ի՞նչ և
քանի հատ կը լսոյ՝ ըլլայ, անոնց պինտ մեծը՝ յայտ-
նի է որ նամակագրութե՛ ոճն ու լեզուն լնտանի
խօսակցութիւններնուու կարգէն բոլորովին օտար
բան մը կարծելն է։ Բայց ասոր վրայ ալ թէ որ քիչ
մը մըտմըտալու ըլլանք՝ աս վախէն ալ բոլորովին
կաղատինք, ու նամակի մշջ գրածնիս, սովորական
մտմտացածնիս ու բերնով չի զուրցվելուն պատճա-
ռը՝ ուղած մարդերնուու քովերնիս չի գտնելովելուն
համար ըլլալու դանարով՝ ոյն դժուար ու մեծ բանը
հարկաւ երկու գլխաւոր իրանոնի կը վերածի, ու հե-
տևաբար ալ քանի մը օրվան ջանքի ու աշխատութե՛
կարօտ ըլլալուն տարակոյս չի մնար։

Ուստի նախ նամակին լեզուն ամմեն օրվան խօ-
սած խօսքերնուու ոճովը պիտի ըլլայ։

Արդարեւ պարզ ու յստակ ոճը ձգելով՝ ոչինչ մեկ
բանը մեծ մեծ բառերով ու դարձուածներով յայտ-
նել ուղղողը՝ խմաստի կողմանէ աղքատ ըլլալուն՝
մտքին ամլութիւնը բառերով ծածկել ուղող կը
համարովի, ու անանկով ծածկ կը լսոյ։

Երկրորդ՝ նամակը որի որ պիտի գրվենէ՝ ան-
մարդը քովերնիս եղած ատենը՝ բերնով իրեն ինչ
պիտի ըսվերնէ, նամակին մշջալ անոնք ըսելու է։

Ահա նամակագրութե՛ բոլոր արուեստը՝ գըլսա-
ւորապէս աս երկու կանոնին կը վերածին. մնացած-
ները, որովհետեւ ոլինտ ոչինչ բան մըն ալ վայելսու-
թեամբ ընելու կամ զուրցելու համար՝ քիչ շատ
միտք դնելու բաներ ունին, ասանկ ալ նամակներուն

Նիւթելին զամազանութենէն գրութեան կերպը՝ ու
մարդկանց այլ և այլ աստիճանի, պաշտօնի, ու վի-
ճակի տէր ըլլալնուն նայելով՝ հետերնին ընելիք
ակնածութիւննիս ու ընտանութիւննիս մշմէկ քիչ
իրարմէ կըտարբերի :

Ասոնց ամմէնը՝ կէսմը նախագիտելեաց մէջ պի-
տի սորվենք, ու կէսմ'ալ ամմէն մէկ տեսակ նամակին
համար տրված մասնաւոր գիտելիքները պիտի սոր-
վեցընեն. որ դիւրին ու քիչ բաներ ըլլալնին նայ-
ելով՝ չի սորվել յայտնի ծուլութիւն ու ամօթ է :

Ուստի աս սակաւաթիւ թղթերը՝ ան կանոննե-
րուն վասյ վարժութի մը ու օրինակներ ըլլալով՝ կը
յուսանք որ շատերուն օգուտ կընէ. որով մենք ալ
նպատակներնուս հասած սեպվելով կուրտիսանանք :



ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ՅԱՐԴԱԿԱՆ ԶԵՒՔ ՆԱՄԱԿԱՑ



Անչպէս որ ամմէն նամակ մի և նոյն
նիւթի վրայ կամ մի և նոյն մարդու չեն
կրնար ըլլար, ասանկ ալ անոնց ամմէն մէ-
կուն մէջ գործածվելու յարդական ձևե-
րը կը փոխվին: Ի՞սկ յարդական ձևերը ըստած-
նիս՝ ընդհանուր հաւանութե՛ք որոշված-
քանի մը քաղաքավարական խօսքեր են,
որով նամակնիս որի որ պիտի գրենք նէ՝
անոր վրայ ունեցած քիչ կամ շատ յար-
դութիւննիս կիմացունենք:


Ի՞սկ եղանակները թէպէտ ինքիրեննուն
ոչինչ բաներ են, բայց փոքրոգիներուն
հպարտութիւնը ու ունայնութիւն՝ անոնք
չափէն աւելի մեծցուց, անանկ որ՝ մեզն
համար որչափ ոչինչ բաներ ալ են նէ՝ հար-
կաւ պէտք է որ ուրիշներուն համար սոր-
վինք ու գործածենք:

Կըկին կըսեմ որ միտքէ չելէ՞ ու կը
յորդորեմ որ ուրիշներուն հետ աղէկ
վարվիլ ուղողը՝ պէտք է որ առաւել դի-
մացինին տւելի պատիւ ընելով պակասա-
ւոր, գտնըփի , քանի թէ քիչ ընելով։
Կտոր մը տւելի քաղաքավարութիր՝ մեզի
յանցանք մը չե կը ընար սեպվիլ . բայց կտոր
մը պակասը՝ շատ անգամ դիմացիններնուս
միտքը մեր վրայ կը ծուէ : Յածութեան
իշնալու չափ խոնարհիլ պէտքը չէ . բայց
ուրիշը հաճելու համար՝ վայելուչ եղածը՝
պէտք է որ դպուշութեամբ կտարենիք :



ՆԱՄԱԿԻ ԳՈՐԾԱԾՎԵԼՈՒ
Թ. ՈՒՂԹ. Բ.

Ո նդհանրապէս՝ միջակ մեծութեամբ
ու ձերմակ թուղթ պիտի ըլլայ։ Օհէ որ
նամակը առնելու մարդը խրկողէն մեծ ու
պատուաւոր մէկն է՝ կէս թերթի վրայ
գրելը շատ մեծ անքաղաքավարութիւնն է։
Բայց թէ որ խրկողէն պզտիկ ու անոր
ընտանի բարեկամն է՝ հոգ չէ։



ՎԵՐՆԱԳԻՐ

Ո երնագիլը պատուանուն մը նէ որ
նամակնիս առնելու մարդուն կուտանիք ։
Օհէպէտ ասոր վճռողական ձևեր տալ չըլ
լոր, ինչու որ մարդուն աստիճանն ու
գանրված վեճակին պարագաներուն նայե-
լով կերպ կերպ կը փոխվին ։ բայց մենք
պինտ սովորականներէն՝ աս աեղը քանի
մը հատ կը դնենիք։

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՐԵԳԱ ԵՐԱՆԵալ ԱՐՔԱՊԱՆ ՀՈԳԵՈՐ ՏԵՇՐ :

ՊԱՏՐԻԱՐԳԻ

ԿԱԵՐԵՐՋԱՆԻԿ և Ա ԵՀԱՎԻԱՆ ՏԵՇՐ :

ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ա ԱԵՄԱԿՈՆ և ԲԱՊԵՎԻԱՆ ՏԵՇՐ :

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ա ԱՆԱՊԱՏԻՆ և ԲԱՊԵՐՋԱՆԻԿ ՏԵՇՐ :

ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ա ԱՊՈՒԹԾԻՄԱՍ և ԱՐՔԱՄԵԱԼ ՏԵՇՐ :

ԱԽԱԳ ԵՐԵՑԻ

ԿԱԵՐԵՐՋԱՊԵՏ և Շ ՀՈՊՇԱՊԱՐԴ ՀԱՅՐ :

ԵՐԵՑԻ

ԱՐԺԱՆԱՍՅԱՐԻՎ և Պատուական Հայր :

ԶՕՐ ԵՒ ՄՕՐ ԳՈՐԾԱՃՎԱՃՆԵՐԸ ԱԽՈՆՔ ԵՆ

ԱՐԺԱՆԱՍՅԱՐԻՎ, ԱՄԵՆԱՍԱԲԵԼԻ, ԳԱՐԱ-
ՎԱԳՈՒԹ, ԻՆԱՐԵԽՆԱՄ Հայր, Կամ Ահայր :

ԵՐԵՐԸ ԵՒ ՔՐՈՃ

ԱՆՁԼալի, Յարգոյ, Պատուական, Աի-
րուն, Աղիւ, Յաղելի Եղբայր, Կամ
Վայր :

ԶԱՒԿԻ

Յանկալի, Փարելի, Պատուական, Աիրա-
սնունդ, Աիրելի, Խոհեմ, Հնաղանդ,
Օրհնեալ, Օտուակ :

ԵՐԵՒԵԿԻ ԽՇԱՆԻ ԿԱՄ ՏԻԿՆՈՃ

Պայծառափայլ, Պէրճապատիւ, Գէրա-
փառ Խշան կամ Տիկին :

ԱԶՆՈՒԱԿԱՆԻ

Վաղառոհմիկ, Ազնուամեծար, Վեծա-
զարմ Պարմն :

ՄԵՃԱՏՈՒՆԻ

ՎԵՃապատիւ, Արժանամեծար, ՎԵ-
ճաշուք Պարմն :

ՎԱՃԱՅԱԿԱՆԻ

ՎԵՃահամբաւ, Ազնուաշուք Պարմն :

ԲԱՐԵԿԱՄԻ

Արժանայարդ, Արելի Բարեկամ :

Վարնագիրները՝ թղթին վերի դիեն
մատ մը տեղ ձգելով սկսելու է. իսկ բուն
գրելիքներնին՝ մարդուն մեծութել նայ-
ելով երկու իրեք տող կամաւելի ևս հե-
ռուեն սկսելու է: «Ամանապէս թղթին
մինչև վարի տողն ու գրելը վայելուչ բան

չէ , բայց ընտանին համար հոգ չէ : Անդին առջե երեսը լմբնցունելէն և դարձունելէն ետեւ , առջինին պէս ետեւի երեսն ալ լուսանց թողելու է : Վրկու առղէն պակաս բան ետին անցունել չըլլար . բուն թուղթը առջե երեսին մէջը ուսկից սկսաւնէ՝ ետեւի երեսին մէջ ալ անկէ սկսելու է . բայց թէ որ նամակը առնելու մարդը հասարակ կամ ընտանի մէկն է՝ վերնադին առղէն սկսելն ալ հոգ չէ :

Թ. Ղ. Թ. Ի. Ն Մ Է Զ Բ

Վմմէն մարդուն իր աստիճանին նայելով ինչ վերնագիր գրվի նէ՝ անոր քիչ մը թեթևել՝ պէտք եղած ժամանակը շարունակ թղթին մէջն ալ գործածելու է . և եթէ նամակը առնելու մարդը՝ եւելօք երկելի մէկն է՝ անոր տեղը գրված դերանուններն ալ ու ածականներն ալ գլխագրով սկսելու է :

Անչպէս որ առաջ ալ ըստ՝ կրկին կը սեմ , որ նամակը առնող մարդուն վեճակին նայելով՝ գործածած ոձերնիս անոր պիտի յարմարենք , ուրախութեան մէջ եղողին՝

տրտում կերպով, տրտմութե՛ մէջ Եղողին՝
ուրախ կերպով մը գրելով, կամ չափէ Ե-
ւէլ ընտանութի՛ ցուցունելով՝ ըլլայ՝ որ
դիմացիննիս բարկացունենք :

Ո՞ւնէ մեծ մարդոց նամակի մէջ բան
հարցունել ըլլայ՝ ասիկայ ընտանութի՛
ըլլալուն՝ անքաղաքավարութի՛ կըսեպվի :
Բայց հարցըվի ալնէ՝ խոնարհ ձևեր գոր-
ծածելու է, ինչպէս են,, ներէ տէր իմ
որ . . . , կամ,, ըլլայ որ յանդգնութի՛
մը սեպէք . . . եայլն : “Ամանապէս ասանկ
մեծ մարդոց հետ հրամայական կերպով
խօսիլը մեծ կողիտութիւն է :

“Ամակի մէջ աւրածներ գտնըվին, կամ
լընցած տողերուն մէջ տեղը՝ նոր տող
գրել կամ բառ գնելպէտք ըլլայնէ՝ նա-
մակը նորէն գրելու է, անանկ աղտեղի
կերպով չերթար :

Ո՞ւկի մը հետ իր ընտանիքներուն կամ
ճանօթներուն վրայօք խօսվինէ՝ սոսկ ա-
նոնց անունները տալ ըլլայ՝ անոնց մէյ-
մէկ վայելուչ պատուանուն ալ տալու է :

Ո՞նդ հանուր կանոն մը եղած է որ մենէ
մեծ մարդուն չաղացենք որ ուրիշ մէկին
բարեւ ընէ, մանաւանդ երբոր բարեւառ-
նելու մարդը՝ նամակը առնողէն պղտիկ
ըլլայ, բայց իսեն հաւասարն ալ ըլլայնէ՝

գոնեւ քաղաքավար կերպով մը զուրցըվեւ :
 Ես բարեները նամակին մէջ տեղը գրել
 ըլլար , չետագրուե մէջ գրելու է . բայց
 թէ որ բարեր առնելու մարդը՝ նոյն նա-
 մակին մէջ յիշվեր է՝ մէջ տեղը գրվեալ
 նէ՝ հոգ չէ :

ՎԵՐՋԱԳԻՐ

Պաղթին մէջ տմիւն ուղածնիս գրելէն
 ետեւ , վերջը Աղջեղի՛ր մը կը դնենք : Ետքը՝
 անոր տակովը թղթին պինտ աջ կողմը՝
 ամմէն մարդուն իր աստիճանին նայելով՝
 անկեղծութեան կամ յարգանաց խօսք մը
 ըսելու է . զոր օրինակ՝ թէ որ ազնուական
 մարդ մը է՝ ողջ եղի՛ր

Տնամ

Կաջապահի աղնուականուեց
 ն . ծ . (աշու անուն)

Թ Ա Խ Ա Կ Ա Ն

Պառւղթը առնողը՝ գրողէն մեծ մարդէնէ, թուականը վերջադրին դիմացօքը լուսանցին մօտ գրելու է. և նախ գրվածքաղաքին անունը, ետքը ամսուն օրը, ետքը տարւոյն թիւը. զոր օրինակ՝

Կոստան" . 20 մարտի . 1841 : " Ա, ամակը առնողը գրողին հաւասարն ալ ըլլայ նէ՝ աս կերպով գրելը աղէկ է . բայց թէ որ անկէ պղտիկ է՝ անմիջապէս վերնադրին տակը՝ դէպ ՚ի ձախ կողմը կրնանք գրելու : Գանք տոմսակներուն, թէ որ այն օրը՝ տիրոջը պիտի հասնի՝ սոսկ օրվան անունը և ժամը նշանակելն ալ ձեռք կուտայ :

Ս Տ Ո Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Այսորագրութիւն՝ թուականին դիմացօքը, և անկէց քիչ մը վարօք թղթին աջ դին կը դրվի : Ասոր մէջ չորս բան կը մըտնէ . նախ՝ ինչպէս վերը ըսինք՝ թուղթը առնողին աստիճանին ու պատուոյն նայելով հետը խոնարհական բառ մը դնելու է .

Երկրորդ՝ գրողը իր անունը. Երրորդ՝ մակ
անունը. ու չորրորդ ալ՝ իր վեճակին կամ
պաշտօնին անունը։ ԱԵԾ մարդոց գրված
ժամանակը՝ ստորագրութիւն վարօք թղթին
տակը կը դրվե։ “Կամակներու մէջ գլխա-
ւորապէս նայելու է որ ստորագրութիւնը ու
թուականը չի մոռցըվե, մեծ ամօթ է՝ ու
անկէ Երբեմն գրողին վեաս ալ կը հասնի։

ՅԵՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ստ անգամ կը պատահի որ նամակ-
նիս ստորագրելնուս ետքը՝ միտքերնիս նոր
բան մը կիյնայ, կամ իմացընելու արժան
լուր մը կը լսենք. այն ժամանակը թուա-
կանին ու ստորագրուե վերջի տողէն մէկ
երկու տող վար, նամակին ձախ դին ։ ։ ։ ու
Ք տառերը դնելով (որ յետոյ գրված ըսել
է) ըսելիքնիս գրել կոկոմինք։ Քայց որով-
հետեւ ասիկոյ շատ անգամ ան մտագրու-
թենէ յառաջ կուգայ, անոր համար աս
բանը՝ մի միսյն մտերիմներու հետ կը լսայ,
և ան ալ անոնց բերնով մէկի մը բարե-
խրկելու ըլլանք նէ. նմանապէս զգուշա-
նալու է որ լուսանցի մէջ ալ բան չի գրվի։

Կ Ն Ի Ք

Թառուղթը քիչ մը երկար քառակուսի՝
 ու վայելուց մեծութե՛ ծալլելէն ետեւ
 կնքել պէտք է։ Ուշ որ մեծ մարդու եր-
 թալու նամակ է։ Ապանիախ մոմով կնքե-
 լու է։ չէ նէ հասարակ գործածվածը
 նշխարքն է։ Ուշ որ նամակը առնելու մար-
 դը սուգի մէջ է։ նշխարքը սև ըլլայ նէ
 աւելի աղեկ է։

Մ Ա Կ Ա Գ Ի Ր

Թաղթին մակագիրը, Հասցէն, ծալլած-
 թղթին վրայ կը դրվի, որ ոչ շատ վարէն՝
 և ոչ աւ շատ վերէն պիտի ըլլայ։ Վախ
 մարդուն աստիճանին վայլած պատուանուն
 մը դնելու է։ Ետքը անոր անունը, մակ-
 անունը։ ու ետքն ալ անոր պաշտօնին տ-
 նունը։ Ինկէ քիչ մը վարօք աջդին՝ մար-
 դուն եղած քաղաքին անունը, և նոյն
 տողին ձախ դին՝ եղած թաղը։ բայց քա-
 ղաքին անունը՝ թաղին անունէն վարօք
 պիտի ըլլայ։

ԵՐԱՐԿԵՐԻ ԲՆՑՄԵԼԵԿՆ

Թ Ա Ւ Դ Թ Ք

Տ Ն Ո Ր Ճ Ա Տ Ո Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ն Ո Ւ Ա Ն Ե Ւ
Տ Ա Ր Ե Դ Ա Ր Ձ Ի



Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Պարած ամմէն մէկ թղթերնուս մէջը՝
գլխաւորապէս երկու բանի նայելու է .
մէյ մը՝ գրած մարդերնուս ով և ինչպէս
ըլլալուն , մէյրալ անոր նայելով մեր ով
ըլլալը աղէկ մը կշռելու է , որ թղթերնուս
բերանը՝ անոր յարմարենք :

Իարեկամներու ու հաւասարներու մէջ՝
անուան ու տարեդարձի համար իրարու
գրված շնորհաւորութե՛ թղթերը՝ պէտք
է որ զուարձալի՝ ու գրեթէ ղքօսանաց
համար գրուած ըլլան + և գլխաւորապէս

նուըրը ու փափուկի իմաստներով պէտք է
որ գըլլին :

ԺԱՆ որ նամակը գըլլողը՝ ոտանաւոր գը-
րելու կարողութիւն ունի՝ աս կերպ նամակ-
ներու մէջ մանը բագ մը՝ կամ նուագ մը
կընայ շինել ու դնել : Բայց որովհետեւ
բարեկամութեւ ազնիւ կիրքերը՝ մարդուս
բոլը հանձարէն վեր կը համարվին , անոր
համար անանկ զուարձական բաները՝ նա-
մակին վերջը ձգելու է :

ՎԵՃԵՐՆՈՒՄ՝ կամ մենէ վեր մարդոց
գրած թղթերնուս մէջ՝ եւելօք յարգութիւ-
ցուցընելու է . ինչու որ այն ժամանակը
թղթերնիս զուարձականութեւ կելլէ՝ ու
առաւել պարտքի մը կարգ կը մննէ :

ՏԱԱՅ ՄԸ ԻՐ ՀՕԲԸ

ԱԵՐԵԼԻ և յարգոյ Հայու :

Ա ս օր ձեր հրամանոցը անուան օրը ըլ-
լալուն՝ գիտես թէ ձեր քովը եկեր եմ ,
կամ չեյտեմաւ ինչպէս տղէկ մը ըսեմ ,
ձենէ զատված ըլլալուս ցաւը՝ աս օր ա-
ւելի սաստիկ կիմանամ : Ա, Երեցէք ինծի ,
որ գոնէ մոքով քիչ մը ձեր քով գամ , ու

ձեզի պարտական Եղած յարգութիս ցուցընեմ, Երջանիկ ու Երկար օրեր մաղթեմ, ու Հայրական Համբուրի մը ու օրհնութեարժանանամ. ահա իմբաղջանքներս ասոնք են, որ ձեզի Հաճելի ըլլալին աղէկ գիտնալով՝ ձեր քովը չի գտնըվելուս ցաւըքիչ մը կը թեթևայ:

Ոերելի մօրս ձեռվըները կը պադնեմ, ու կաղոչեմ որ իր որդւոյն յարգութիւնները՝ սիրով ընդունի. ողջ Եղիք:

Տնայ

աւենահնազանդ որդինիք
(այս անուն)

ՊԱՇՏՊԱՆԻ

ՏԵՂԻՔ:

Ձեզի Համար զգացած յարգութիւնս ու Երախտագիտութիս ցուցընող առիթները՝ միշտ անօգուտ չանցունելու կը ջանամ. ուստի աս ձեր Հրամանոցը անուան բարեբաղդ օրն ալ Երախտագիտութիւնս ու յարգութիւնս ձեզի ցուցընելը ինձի պարտք մը սեպելով կաղաչեմ որ ձեր սո-

Վորական քաղցրութեր անոնք ընդունիք։
 Չեր հրամանոցը երկար օրերուն ու եր-
 ջանկութեր համար այ ըրած աղաչանքնե-
 րուս հետ՝ մէկմ'ալ աս կաղաչեմ՝ որ ծա-
 ռայներնուղ համար միշտ մի և նոյն բարե-
 սրբութիւնովը մնաք, որ ես ալ ձեր հրա-
 մանոցը պաշտպանութեան պատիւէն՝ ու
 հետեւաբար ալ մինչև հիմայ անկէ տեսած
 մեծամեծ օգուտներէս չե զբկլվիմ։
 ողջ եղիք։

ՀՕԲԵԴՈՒ

Յարգոյ Հօրեղբայրս։

Չեր երջանկութեր համար բարեմաղ-
 թութի ընելը՝ ինձի մեծ բերկըութիէ։
 որովհետեւ ամմէն օրվան ըրած փափաքս աս
 է։ Աւստի աստուծմէ կըխնդրեմ որ՝ ես
 ձեր քովը եղած ցանկալի տաեննելս՝ ձեր
 անունին օրերը՝ ինչպէս որ բարեբաղդ ու
 ուրախութե օրեր եղան նէ՝ աս նոր օրն
 ալ անոնց պէս ըլլայ։ Եւթէ որ ած խըն-
 դիրքս կատարէ՝ անոնց պէս գոնէ յիսսու-
 նէն աւելի ուրիշ նոր օրեր ձեղի պարգև
 պիտի ընէ։ Կմանաղէս կըխնդրեմ որ

վըսս ունեցած սէրդ սրտիդ մէջէն անպակաս ընէ՝ որ ես ալ երջանիկ ըլլամ։ ողջ եղբ' ու։

Տնայ
անիեղծ սիրով

Յ. Պ. կաղաչեմ՝ իմ կողմանէս պղտի բարեկամներս՝ ձեր ձագուկները դրկեք ու անկեղծ բարես անոնց տաք։

ԸՆՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԻ

Բարեկամ։

Եմացած ըլլամ, կիրակի օրը անուանդ օրնէ, ու կը յուսամ որ սեղանին գլուխը ան տօնախմբութեր կատարող ջերմեռանդներուն մէկն ալ ես պիտի ըլլամ։ Վայէկ գիտես որ ես աս գործէն շատ կը զուարձանամ։ Իմ գալս քեզի իմացունելու համար՝ առաջուց սուրհանդակ մը կը խրկեմ, որ հնդկահաւ կանչէք նէ՝ մնաս չունի։ Կաղաչեմ բարեկամութես համար ըլլայ՝ մարդասիրութե մը ընդունեցէք։ Վնոր հետ մէկ տեղ հինգ վեց հատ ալ հին գինիով լեցուն շեշէներ կան, անոնք ալ

պահեցէք մինչև որ ան ցանկալի կերակին
գայ: Ասոնց համար չե սրդողիս՝ բան մը
կործնցուցած չունիմ, և կը խոստանամ՝ որ
ես ավածիս կրկնապատիկը ձենէ կը հա-
նեմ: աս չափը հերիք է: ընտանեացդ ինէ
բարե ըրէ: ողջ եղի՛ր:

Բարեկամ չեք

ՀԵՏԸ ՀԱՏ ԸՆՏԱՆՈՒԹԻՒՆ ԶՈՒԵՑԱԾ
ԲԱՐԵԿԱՄԻ

Յարդոյ Բարեկամ:

Կ նորհաւոր ըլլայ տօնդ: Քանի որ
ասանկ յաջող դիպուածներ կը պատահի՝
որով ձեր վրայ ունեցած անկեղծ սիրոյս
ապացոյցները ձեզի կրնամ ցըցընելնէ:
Չատ եւէլօք կուրախանամ: և ի՞նչպէս չու-
րախանամ, որովհետեւ աս անանկ օր մը նէ:
որ քու ցանկալի բարեկամութիւնդ ինձի
ստանալ տվաւ: Աը յուսամոր սիրելի ըն-
տանեացդ բարօրութեղ համար ըրած փա-
փաքներէս՝ չես երկմտիր: ողջ եղի՛ր:

Տնամ
անիւղժ սիրով

ՊԱՏԱՍԽԱՆ

Ենկեղծ Բարեկամ:

Երջանկութեանս Հոռմար ըրած բազ-
ձանքներուդ անկեղծութեն ամենեին կաս-
կած մը չունիմ . որովհետեւ գիտեմ որ ա-
նոնք ընողը՝ իս կըսիրէ . նմանապէս կը
յուսամ որ՝ փոխարէն իմ կողմանէս ալ
եղածներուն անկեղծուելը չես երկըացիր :
Եղէկ գիտես որ ամմէն տարի տօնախըմ-
բութես օրը՝ բոլոր ընտանիքս ու բարե-
կամներս մէկ տեղ կը ժողվըվին , ու ես ալ
անոնց մէջը ըլլալովս՝ Երջանիկ կը լլամ :
Ես Երջանկութիւն ձեր գալովը աւելի կե-
ւելնայ . ուստի կը յուսամ որ աս անգա-
մին ալ առջիններուն պէս բազդ կունե-
նամ . և աս ալ գիտցիք որ դուք չե գալու
ըլլաքնէ՝ ժողովքնիս կատարեալ եղած-
ըլլար , ու ես ալ աս յոյս ըրած ուրախու-
թիւնս չեմ կընար վայելել . ողջ եղի՛ր :

ՏԱԱՑ ՄԸ ԻՐ ՀՕՐԸ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Պատուական Հայր :

Ո՞չամի գեղեցիկ է ինձի աս օրըս .
ասիկայ ան օրն է՝ որ քեզմով կեանք ըս-
տացողներուն Երջանկուելը համար ծնար ,
աս օրվան համար պէտք է որ աստուծմէ
շնորհակալ ըլլամ ու փառք տամ : Ոճէ որ
ած ըաղձանքներս կատարելու ըլլայ՝ ին-
ձի շնորհք պիտի ընէ , որ աս անպատմելի
ուրախութիւր ուրիշ շատ ժամանակներ ալ
կրկն ձեզի իմացընեմ՝ ու աս զուարձու-
թիւնը վայելեմ : Աս հաստատուն խոր-
հուրդէս դառնալու պատճառ մը չըլլայ
նէ՝ իմ վարքս ու սէրս տեսնելով աշ-
խարհք գալերնուդ համար աւելի պիտի
ուրախանաք : Կաղաչեմ՝ սիրելի և յար-
գոյ հայրս , աս ըսածներուս սրտէս ըլլա-
լուն հաւատա՛ ու ընդունէ՛ , և քու օրհ-
նութիւնովդ ալ հաստատէ՛ . ողջ եղի՛ր :

ամենահնաղանդ որդինիդ

ԲԱՐԵԿԱՄ ՄԸ ԻՐ ԲԱՐԵԿԱՄԻՆ

ՎՂԻՒՄ ԲԱՐԵԼՈՒՄ:

ՎՀա տարի մըն ալ եւելցաւ, ու հետդ
ես ալ կուրախանամ։ Ուերես՝ տարի մը
աւելի պակսելուն համար՝ չուրախանալդ
աւ աղէկ կըլար պիտի ըսես քայց աս ան-
կարելի բան ըլլալուն՝ տսանկ ատեն ատեն
ժամանակին ձեռքէն յափշտակած օրեր-
նուս համար ուրախանալ պէտք է՝ որ մէկ
վայրկեանէն մէկալը ձեռվընուս չելլէ։
Վստուած տար՝ երկուքս ալ տսանկ շատ
օրեր ձեռք ձգէինք ։ գուն՝ քու բարե-
կամներուդ օգտին համար, ես ալ քու
բարեկամնեթիդ վայելելու՝ ու քեզի ծա-
ռայութիւններ ընելու՝ աւելի երկար ժա-
մանակ գանելու համար ։ ողջ եղի՛ր։

ԹԱԴՐԱՔ ԵՆՈԲՀԱՏՈՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԳԼԽՈՅՑ

ԳԻ ՏԵԼԻ Ք

Վաղանդի օրը՝ անձամբ իրարու այցե-
լութեան չի գացողներուն համար, սովո-

բութի կայ որ նամակով իրարու շնորհա-
ւորութի կընեն : Աս սովորութիր թէպէտ
շատ հին է , բայց ըստ իմ կարծեացս՝ ծի-
ծաղականներուն պինտ մեծկակն է :

Ո՞թէ՞ բարեկամները տարւոյն ամմէն
մէկ օրվան՝ ամմէն մէկ վայրկեանին մէջ ,
մի և նոյն առողջութիր՝ մի և նոյն բարօ-
րութիր՝ իրենց բարեկամներուն չե՞ն ցան-
կար : Արդե՞ք յաջողակ հողմոյ սպասող
ձանապարհորդի պէս՝ պէտք է որ մարդիկ
իրարու առջի տարվընէ աւելի երջանկուի
մաղթելու համար՝ օրացոյցին մէկ նշանա-
ւոր օրին սպասեն :

Աւստի՝ յայտնի է որ ան օրվան շատեր-
ուն սիրոյ խոստմունքները՝ սուտ է . սո-
վորութեան բռնութէն յառաջ եկած է .
բայց որովհետեւ ասիկայ ընդհանրապէս
քաղաքավարական պարտք մը սեպված է .
անոր համար պէտք է որ սովորութի եղա-
ծին պէս ամմէն մարդ ատ գործը կատարէ .
մանաւանդ ինչպէս որ առաջալ ըսինք՝
քաղաքավարութէն մասին թող աւելորդը
մեղի պակասութի սեպվի , քան թէ ընաւ
ընելը՝ կամ թերի ընելը :

ՏՐԱՅ ՄԸ ԻՐ ՀՕՐԵ

ԱԵՐԵԼԵ և յարդոյ հայրուն

Տարւոյս առջե օրվան համար գրած
նամակս՝ ըլլայ որ սովորութիւն է՝ կամ ա-
նանկ կը վայլէ ըսելով գրված սեպէք .
հապա՝ ձեր վրայ ունեցած սիրոյս առա-
ւելութենէն գիտնաք՝ ու միանգամայն
յարդանաց ու հնազանդութե ալ նշան մը
սեպէք : Ձեր տուղջութել ու բարօրու-
թեանը համար ըրած բարեմազթութիւնէրս՝
կաղաչեմ՝ ընդունեցէք : Ոյէ որ ած փա-
փագներս լեցընելու ըլլայ՝ անշուշտ ձեզի
երկար կեանք մը կը պարզեւէ՝ որ բոլոր ձեր
ընտանիքը՝ ու մանաւանդ ես ալ երջա-
նիկ ըլլամ:

Օ աւկներուդ վրայ ունեցած սէրէդ
կընամ՝ հասկնալ, որ եթէ բարի վարք մը
ունենամ՝ կըցածիս չափ ձեզ աւելի եր-
ջանիկ պիտի կընամ ընել, ու անցունելու
ծրեցնուք ալ խաղաղութիւն մը տալ : Ուստի
երջանիկութեդ համար, ոյ միայն աղաչանք
ընեմ՝ ու գործքով ալ չի ջանամնէ յան-
ցաւուք կը գտնըվիմ : Բայց գիտցած ըլլաք
որ բոլոր ջանքս՝ աս բանին համար է, չէ

թէ միայն որդիական սիրոյ պարտքին համար , այլ մանկութես ու կրթութեանս վրայ տարած անշտափ անհամար հոգերուդ նայելով առ բանին անանկ պարտաւոր եմ , որ եթէ առ սուրբ պարտքը զանց առնելու ըլլամ՝ իրաւամբ մեծ յանցանքի տեր եղած կըսեպվիմ : Ահա այս չափը՝ իմ պարտքս ինձի ըսել տրվաւ , սրտիս ըսել տրվածները՝ ասոնցմէ շատ էւել են , անանկ որ առ պարտքին կատարումն ալ անոր մեծ ուրախութիւն մը ու հաճութիւն մըէ . մանաւանդ որ ինձիալ մեծ օգուտ է . ողջ եղի՛ր :

ԲԱՐԵՊԱՏՏ ԱՆՁԻ

§Ե՛Ր :

Կըսնդրեմ աստուծմէ՝ որ այս նոր տարւոյս մէջ՝ ինչ բանով որ կըհաճիք ու խաղաղ՝ կընաք ըլլարնէ՝ բոլորն ալ ձեզի պարգևէ : Կեանքերնիս կամաց կամաց կանցնի՝ ու անկեց մեզի քանի մը վայրկեան միայն կը մնայ՝ որ մեզի յաւիտենականութե պէս կուգան : ԱԵրին աղըել ուղելը՝ միայն ոյ ունեցած պարտքերնիս

ՎՃՈՐԵԼՈւ ՀՅԱՄԱՐ պիտի ըլլայ . ու կեան-
քերնուս խաղաղութին աւ շնորհք մը՝ ու
օրհնութի մը պիտի սեպենք՝ որ մեր վրայ
կը հեղու՝ ու անով մեզ պարտաւոր կընէ,
որ հաւասարմութե իրեն ծառայենք .
ողջ եղի՛ր :

ՊԱՏԱՍԽԱՆ

Բարեկամ:

Պու ըրած . բարեմաղթութիներըդ՝
ամմէնուն ըրածէն ինծի աւելի հաճելի
էն . անոր համար ես ալ, թէ տարւոյս ըս-
կիզբը՝ և թէ մէջը՝ քեզի համար ըրած-
ներէս աւելի յօժարութե ուրիշ մէկու մը
համար ըրած չեմ : Ես անանկ կը կարծեմ
որ ած խնդիրներըդ կը կատարէ , ու
որի համար ալօթես նէ՝ երջանիկ կը-
լոյ : Բայց աս ալ աղէկ գիտեմ որ մէկուն
սիրար քու ցանկացած բաներուդ վրայ
իմինիս չափ չե տաքնար . ողջ եղի՛ր :

ՆԱՄԱԿ ԱՌԱՆՑ ԸՆԾԱՅԻ

ԱՅՐԵԼԲ'Դ ԵՄ:

Այրոյս նշանները՝ միայն չոր ու անպտուղ փափաքներով քեզի ցըցընելու բոնադատված ըլլալուս համար՝ իս շտադքալը կը սեպեմ. բայց քեզի պէս սիրո ունեցողը գոհ ընելը՝ ուրիշը ընելէն աւելի գիւրին է։ Աւստի կը յուասմ որ տարւոյս սկիզբին քեզի համար ըրած փափաքներս սիրով կընդունիս, ու անոնց կատարումն ալ՝ ոյ ըրած աղաջոնքներէս կը գիտնա։ Խնձի պատիւ ըրած բարեկամութիւնդ՝ ամմէն բանէն աւելի ցանկալի է սրտիս, ու իմսէրս ու օր ըստ օրէ քու վրադ աճելով անոր գինը աւելի կեռնայ։ ողջ եղիք։

ԸՆՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՏԻ

Բարեկամտ

Քեզի թուղթ գրելու միտք չունէի, ինչու որ՝ ինչ պէտք է որ ես ալերեսանց

բարեկամներուն ըրածը ընեմ, որ աս օր-
 վան օրը սովորութիւն է ըսելով կելլեն
 իրարու սուտ ու փուտ բաներ կըդրեն :
 Վու բարեկամդ ըլլալս քեզի հասկըցը-
 նելու համար՝ ինչո՞ւ ասանկ օրի մը սպա-
 սեմ : Խնձի կուգայ որ՝ աս բանը քեզի
 իմացունելու համար՝ ասանկ սովորութիւն
 եղած քանի մը քաղաքավարական խօսքերը՝
 ընել պէտքը չէ . ի՞նչ, սովորութի եղած
 քանի մը քաղաքավարական խօսքեր արդ-
 եօք, ած չընէ որ ես անոնք քեզի հետ
 ընեմ . Ես անոնք՝ որի հետ սուտ խօսիլ
 կուզեմնէ՝ անոնց պիտի պահեմ : Ուստի
 մէկ բան մը միայն քեզի իմացունել կու-
 զեմ . և ան ալ քու երջանկութեղ համար
 ըրած փափաքներս են : Վսկից էւելը մի՛
 փնտուեր ինձմէ . ինչու որ ես լըմընցուցի,
 ու իմ աս օրվան քեզի նամակ գրելուս
 պատճառն ալ՝ մի միայն այնչափ սուտ ու
 փուտ նամակներուն մէջ, մէկմ'ալ ձշմա-
 րիս բարեկամութե սիրով գրվածը գրտ-
 նըվելու համար է . ողջ եզեր :

ՆՄԸՆՑԱԽ ՏԱՐԻՈՅՆ ՄԵԶ ԶԱԽՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ՔԱՇՈՎ ԲԱՐԵԿԱՄԻ

ՊՆԱՀԿԱԼԵ՛Դ ԼՄ:

Ճարի օր և բարի տարի սիրելի բարեկամ : Կը խնդրեմ աստուծմէ՝ որ տարի միւս տարիներէն աւելի քաղցր ըլլայ քեզի : ու անցեալ տարիներուն մէջ՝ քաշած ձախորդութիներուդ փոխարէն , քեզի արժան եղած խաղաղութիր ու հանգստութիր պարգևէ : ինձի համար ալ ուղածներս ասոնք են : ասոնցմէ էւել բան չեմ ուզեր : Հանդիսատ նստեր եմ ու ըսկըսած աշխատելի ճանապարհորդութես վախճանին կսպասեմ : և ճշմարիտը կուզեսնէ՝ կըցածիս չափ անիկայ երկնցնելը կը նայիմ : Դուն ալ ինձի պէս ըսէ՛ , ու իմ երջանկութեանս համար առողջութեամբ դուն ալ երկար ժամանակ ճանապարհորդէ՛ : ողջ եղի՛ր :

ՊԱՏԱՍԽԱՆ

ԱԵՐԵԼԵ ԲԱՐԵԿԱՄ:

Վախթարիչ բարեմաղթութիւններով
առջևս կարեցիր. թէպէտ իմիններս անոնց-
մէ ետքն են, բայց անոնց պէս՝ ասոնքալ
անկեղծ են: Աշրեսուն տարիի չափ կայ որ
քեզ կը ճանչնամ, ու պատուական բարե-
կամութիւդ կը վայելեմ. աստուծմէ ասկէց
էւել բան չեմուզէր, միայն թողար որ՝
անիկայ ուրիշ շատ ժամանակ ալ վայելեմ:
ՎՃ տար՝ նտամակս քեզի հասած ժամանա-
կը՝ ողջ առողջ ըլլայիր, ու քու գրածդ-
ինձի որչափ հաճութիւ տըլվաւնէ՝ աս տլ-
ոյնչափ քեզի տար. ողջ եղի՛ր:

ՏԱՐԻՈՅՆ ԿԸՄԸՆՆԱԼՈՒ ՄՕՏ ՄԵՃԱՐՈՒ
ՄԱՐԴՈՒ

ՏԵՂԵ:

Վ ողջութիւդ ու երջանկութիւդ հա-
մար ամմէն օրվան ըրած փափաքները՝
մօտեցած տարվան համար տլ կը կնելս

ուրիշ աւելի աղեկ կերպով մը՝ առ նամակը
չէի կրնար լինցնել։ Ի՞նչ սրտիս բաղձանք-
ները կատարելու ըլլայնէ՝ առաջիկայ տա-
րիս քեզի համար շատ բարեբաղդ պիտի
ըլլայ ։ ու թէ որ անցած տարիներուն պէս՝
աս տարի ալ իս աչքերնուտ չի ձգէք՝ ես
ալ երջանիկ պիտի ըլլամ։ Կը յուսամ որ
աս պատիւր ինծի կը շարունակէք ։ ինչու
որ բոլոր ջանքս օր է օր անոր աւելի ար-
ժանի ըլլալ՝ ու ձեզի ըրած յարգանացս
անկեղծութիւնը թէ միոյն խօսքով ու-
րիշ կերպով ալ յայտնելու դիպուածներ
գտնալն է ։ ողջ եղելիք ։

ՊԱՏԱՍԽԱՆ

Վ. ՀԱՅԻ ԲԱՄԲԵԿԱՄ:

Վ. ու բարեկամութեղ հաստատուելը
ու անկեղծութիւն՝ շատ ժամանակէ որ կը
վայելէմ։ Վ. սանկ ըլլալուն համար՝ տարի-
ները ինչպէս սկսերեն նէ՝ անանկ կը լը-
մըննան, ու ինչպէս լըմնցեր են նէ անանկ
ալ կսկսին ։ բայց կը ցանկամ որ տարիին
մէջը՝ ասանկ մէկ օր մը ըլլայ՝ որ երկուքիս
փափաքները մէկ տեղ գտն, ու սիրտդ ալ

ուղածիս պէս առջևս բացվեւ : Ես անոր
մէջ ինչ փափաքներ ըլլալը գիտեմ, ու ա-
նոնք կրկնն լսելով առելի կը զուարձանամ :
Անոնց փոխարէն կը ցանկամոր՝ քեզի ալ-
ած կատարեալ առողջութիւնը՝ հանգըս-
տութիւնը՝ ու երջանկութիւնը պարզեւէ,
ու ինչպէս կը յուսամ քու ուղածներդ-
ալ ասոնք են . ողջ եղի՛ր :

ԵՂ.ԲՕՐՈՐԴԻ ՄԸ ԻՐ ՀՕՐԵՂ.ԲՕՐԸ

Ալրելի Հօրեղը այլու :

Ասանկ օրվան մը մէջ՝ իրարու վրայ սէր
չունեցողները անդամ՝ իրարու բարեմաղ-
թութիւներ ընելէն ետեւ, ես ինչպէ՞ս աս
անկեղծ սիրովս լուռ կենամ, ու երկու
կողմանէ իրարու վրայ ունեցած սէրեր-
նուս մեծութել չափ՝ անկեղծ բարեմաղ-
թութիւներ չընեմ : Վու երջանկութիւն-
իմն ալէ . անոր կատարեալ ըլլալուն հա-
մար աղօթք ընելը՝ ինծի համար ալ աղէ-
կութիւն ուղելէ : Ի սէմ արդեօք թէ պէտ
շատ մեծ ուրախութիւով կը գրեմ աս նա-
մակըս՝ բայց կը վախնամալ որ շահասի-
ւութել ոգւով գրմած կը կարծես : Եղ-

բօրորդի մը՝ իր հօրեղքօրը համար բարեմաղթութիներ ընէ՝ ու բարի բաներու փափաքի նէ՝ իր շահուն համար ըրած կը կարծեն։ Աս բանին սիրտս շատ կը նեղանայ ։ ու անոր համար խրկելու ընծայներդ չե պիտի ընդունեմ, որ անկեղծութենէս կոսկածմը չընես։ Անծի աւելի հաճոյական ընծայ մը ընել կուզես նէ՝ բարեկամութեանդ շարունակ ըլլալուն վրայ իս առաջով ըբե՛։ Աս մի միայն անոր կը նայ-իմ։ որ ձեռք ձգածիս պէս, իրաւ մեծ վաստակ մը ըրած պիտի ըլլամ։ ողջ եղել։

ՄԵՃԱՐՈՒ ՄԱՐԴՈՒ

ՏԵՂԵՐ ԻՄ։

Առաջեկայ նոր տարիս՝ ձեզի շնորհաւորելու համար երջանկութի մաղթելէն, աւելի ուրիշ աղէկ կերպով մը չեմ կրնար սկսիլ։ Ասոնք առաջին և սուրբ պարտքեր են որ ձեզի կը հատուցանեմ։ և ինէ ասոնք սիրով ընդունիք նէ՝ ևս ալ կատարեալ երջանիկ կը լլամ։ Դառք ամմէն ժամանակ ինծի բարերարութի ցըցուցիք ։ անանկ որ ըստ արժանեաց շնորհակալ չեմ կը ընար

ըմալ. բայց կաղաքեմ որ անոնք շարունակեք. ողջ եղիք :

ԵՐԿԱՐ ՃԱՄԱՆԱԿ ԱՌԱՆՑ ԿԱՄԱԿԻ
ՀԳՎԱԾ ՄԵԿՈՒՆ

Պարեկամ:

Ըստ շնորհակալեմ աս վոխաղարձ պարտքերը հնարողէն՝ որ տարւոյս աս ժամանակին մարդիկ իրարու կը հատուցանեն. ինչու որ աս սովորութեն պատեհութիովը՝ ձեզ մոռնալըս պիտի գոցվի, որ տրդարև յանդիմանութեն արժանի է. Համարձակապէս ձեզի կը խոստովանիմ որ որչափ դժար վեճակի մէջ ալ կը գտնըվիմ նէ՝ ձեզի նամակ գրելու երես չունիմ: Կը ջանամ որ աս պատեհութիւն ձեռքէ չի հանած ձեզի խոստովանիմ թէ որչափ քեզ մոռցած ալ կերևայի նէ՝ միշտ ձեր երջանկութենը համար բարեմաղթութիւներ ընելէն դադարած չունէի: Խմ սիրոս առաջ ինչպէս գիտէիր նէ՝ հիմայ ալ անանկէ. միայն ժամանակին պարագաներն էին՝ որ անիկայ վոխալած ցըցուցին: Ես որովհետեւ ձերինն ալ չի վոխալած կը կարծեմ,

անոր համար կը յուսամոր դուք ալ տռաջ
ինչ էիք նէ՝ հիմակ ալ ան էք : Եւ եթէ
տարւոյս սկիզբը՝ ինձի համար՝ բան մը
պիտի խնդրեմ՝ ան ալ միշտ քու բարե-
կամութիղ է՝ որ միշտ շարունակելով իս
առջի պէս պատուես . ողջ եղիք :

ՊԱՏԱՍԽԱՆ

Բարեկամ:

Վու նամակիդ վրայ զարմացած էս ա-
ւելի ուրախացայ : Վեզի ընական եղած
անկեղծ համարձակութիւնը անոր մէջ ալ
յայտներ էիր : Վու ըսութեղ նայելով
իս մոռցեր ես կը կարծէի ու կը զարմանայի :
Վսանկ աչքէ ձգվելու արժան ինչ ըրեր-
եմին վրայ մամատալ սկսեր էի : Ո էրջապէս
իս մեծ անհանգստութե աղատեցիր , ու
մէյմտլ ձեռք չի բերվելու կերպով կոր-
սրհցուցած կարծած բարեկամութիւնդ՝
կրկն ինձի տրվեր : Խրաւ որ աս ինձի
մեծ պարգև մը նէ , ու տարիս երջանկութ-
անցնելու մեծ բարեմաղթուի մը կը սեպէմ :

Վսոր փոխարեն , ես ալ կրկն իմ բա-
րեկամութիւնս քեզի կը նուիրեմ ըսելս՝

անօգուտ բան է , որովհետեւ անիկայ ձենէ
ընաւ ետ առած ցունեի ։ ողջ Եղիք :

ԹՈՒՂ.Թ.Ք. ՈՒՐԱԽԱԿՑՈՒԹԵԱՆ

ԳԻՏԵԼԻՔ

Արախակցուե՛ թղթերուն մէջ պէտք
է որ սիրոյ՝ քաղաքավարութե՛ ու երախ-
տագիտութե՛ նշաններ գտնըլին : Բարե-
կամներնուս հետ ուրախանալ պէտք է ,
որովհետեւ անոնց շահ մը ըլլալը մենք ալ-
կուզենք . պաշտպաններնուս , մեծերնուս ,
ու հաւասարներնուս բարեմաղթութիներ
ընելու ենք որ ապերտիստ ու նախանձուս
չեկարծըլինք : Վասնկ դիպուածի մը մէջ ,
բարեկամներնուս գրած թղթերնիս՝ շատ
դիւրին է , ինչու որ ինչ զգանք նէ՝ ան
պիտի գրենք : Բայց պաշտպաններնուս ու
հաւասարներնուս գրածներնիս անոնցմէ
գժար են , ինչու որ ամեն զգացածնիս
աղատաբար անոնց չենք կրնար հասկըցը-
ներ . և երբեմն անանկ գէշալ կը պատահի
որ հիշ գրելու բան մը չենք կրնար գտնել :
Վասնկ ժամանակները՝ հասարակաբար

գործածված խմաստները՝ գործածելու է, որ թէպէտ գովելի բան մը չէ՝, բայց մաս չունի։ Ինչու որ անանկ մեծ մարդիկ՝ առաւել իրենց պատիւ ըլլալը կը նային, քան թէ գրվածներուն անկեղծութել։

Աս կերպ թղթերուն մէջ քիչ մը զուարթութիւն ըլլայ նէ՝ մաս չունի, որով սովորութիւն եղած քաղաքավարական խօսքերուն պարզութիւնը կը դոցվի։

Օ գուշանալու է որ աս կերպ նամակները՝ երկար ըըլլան։ Ճշելու է որ իրմէն ուրիշ գրողներ ալ կան։ ուստի անոնց գրածներն ալ կարդալու ժամանակ թղթելու է։ մանաւանդ որ այն կերպ թղթերը՝ ինքիրեննուն ձանձրացուցիչ բաներն, առաւել նամակը առնելու մարդուն։

ՄԵԺԿԱԿ ՊԱՇՏՈՒՒ ՀԱՍԱՁ ՄԵԿՈՒՆ

Բարձրապատիւ Տէր։

Տէր (պաշտօնին անունը հստ դնելու է) ընտրըվելուն համար, հաճեցէր։ որ հասարակութե ուրախութել ես ալ մասնակից ըլլամ։ Քու խմաստութե, ճարաւարութե, ու արդարութե համբաւդ ար-

գեն ժողովուրդին սիրալ՝ քու վրադ տաքցուցեր էր, ու անոնց աչքին գիտես թէ մի միայն աս բարի պաշտօնը՝ կատարելու համար ծներ էիր։ Տէ՛ր բոլոր հասարակութիւնը՝ ու մանաւանդ ծառացնիդ շատ ուրախ ենք։ ու ձեր կողմանէ արդարութենէ ուրիշ բան յուսացած չունինք։ ողջ Եղիք։

ՆՈՅՆ ՆԻՒԹԻՆ ՎՐԱՅ ՊԱՇՏՊԱՆԻ

Տէ՛ր իմ։

Տէ՛ր աս պաշտօնին հասնիլը՝ լոելով, որչափ ուրախանալո՞ց է՛ք կրնար բաւականազէս հասկընութ։ Վարդարե մինչև հիմայ ըրած բարեբարութիւներըդ վայելելէս ետե, ասանկ դիպուածի մը մէջ, առանց ուրախանալու ինչպէս կրնայի կենալ։ Վսիկայ ուրիշ բան չէ, այլ բարեբարութիւներուգ փոխարէն աստուծմէ վարձք մը՝ որ ամենէն էւել ձեզի տրժանի է։ որովհետեւ ձեզ այդչափ ամմէնը կըսիրեն ու կըպատռեն։ Վնշուշտ գիտեմ որ մինչև հիմայ ուրիշները՝ ձեզի շատ բարեմաղթութիւներ ըրեր են։ բայց աս ալ հասաստ գիտեմ որ

անոնց մէջ իմին ըրածներէս անկեղծը չե
կայ . ողջ Եղիք :

ԱԶԳԱԿԱՆԻ

Յանկալի Քարեկամ :

Եր առ աստիճանին հասնիլը լե-
լվ , շատ ուրախացայ : Աս յառաջադիմու-
թենէն թէպէտ դուք ալ պիտի ուրախա-
նաք , բայց աս աստիճանը՝ հասնելիքներ-
նուտ էն վերջինը՝ չե՞ . այլ իմ եղբօրորդ-
ւոյս ու քու ընտանեացդ համար աւելի
մեծերը՝ կը ցանկամ : Քաղցին ալ՝ ձախոր-
դութեանն ալ՝ մեզի բացած ձամբայնե-
րուն յաջողութիւն երկար կը լսայ : Աս իմ
բաղդիս համար ամմենեին ուրախանալու
աելչունիմ , գննէ աղջականներուս ու
բարեկամներուս յառաջադիմութելնայե-
լով կուրախանամ , ինչպէս որ առ օր ձեր
վրայ ուրախացայ . ողջ Եղիք :

ՊԱՏԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՅԱԿԹՈՂ ԳՏՆԵՎՈՂ
ԲԱՐԵԿԱՄԻ

Բարեկամ:

Արախ եմ, որ ըբիր չըբիր յաղթեցիր +
քեզի չտփ ես ալ կուրախանամ: Խրաւուն-
քը քուկեդ ըլլալէն՝ ամենեին երկբայու-
թի մը չունեի + որովհետեւ առաջուց գի-
տեի որ՝ դուն արդարասէր մէկը ըլլալով,
սնիրաւ բանի ձեռք չես զարներ: Հիմայ
սրտիս ուրախութիր՝ թղթով միայն քեզի
իմացունելու կրփութամ + բայց կը յու-
սամ որ քիչ ատենին մէջ, բերնով ալ
աղէկ մը՝ անիկայ ձեզի կը յայտնեմ +
ողջ եղիք:

ՊԱՏԱՍԻԱՆ

Ոիրեցեալու իմ:

Դատիս յաջողութիր՝ քեզի ալ հոգ-
ընելուդ, շատ շնորհակալ եմ + ու մանա-
ւանդ իմ վրաս աղէկ կարծիք ունենալուդ՝
շատ էւելօք ուրախացաց: Վամէն ժամա-

նակ ջանքս տատնել մէկ գովութե՛ մը ար-
ժանի ըլլալեր, և ասիկայ ինձի շատ մեծ-
փառք կը սեղեմ. որովհետեւ անանկ մար-
դու մը բերնէ լսեցի, որուն յարգը՝ արդէն
ամմէնը կը ճանչնան. ողջ եղիլ:

ՆՈՐ ԱՄՈՒՍՆԱՑՈՂ. ՄԱՐԴՈՒ

Յարգոյ Բարեկամ:

Եիրոյ երջանիկ կապերնիդ լսելով շատ
եւելօք ուրախացայ: Պատուծմէ կուզեմ
որ քեզի ու սիրելի ընկերիդ մի միայն եր-
կար կեանք մը պարզեւէ. մնացածները՝ ձեր
առաքինութե՛ ու բնական լուսութիներ-
նուդ ընելու բաներն են: Եւ որովհետեւ
առաքինի մարդեկ պէտք է որ չի պակսին,
ու ձեր զաւակներն ալ ձեր հովանաւորուե-
տակը մեծնալով՝ ձենէ տեսած օրինակ-
ներովնին՝ ձեզի չնմանիլ չեն կընար, անոր
համար կը իմադրեմ տատուծմէ՝ որ ձեզի
շատ զաւակներ ասյ: Պառք և ձեր սիրելի
ընկերը՝ ասկէ ետեւ մէկ մարմին՝ մէկ անձ
մը՝ պիտի սեպավեր. ուստի կաղաչեմ որ
երկուքդ՝ հետո մէկ բարեկամի մը պէս ըլ-
լաք. բայց ատիկայ անանկ բարեկամութի

մը ըլլայ , որ մինչեւ հիմայ ինձի ցոյց ող-
վածներնուուդ հաւասարի . ողջ եղիք :

ՊԱՏԱՍԽԱՆ

ԱԵՐԵԼԻ ԲԱՐԵԼԱՄ :

Ա մուսնութես համար ցըցուցած ու-
բախութեդ նայելով սիրոյդ մեծութիւն
կրկին անգամ ճանչցայ : Ուստի պարտա-
ւոր եմ որ բարեկամութես վրայօք քեզ
նորէն վստահացնեմ : Ուրեմն ապահով
եղիք , վեճակս փոխելով սիրոս ալ չե փո-
խեցի . և Եթէ հիմակ միայն անոր խօսքը
կընեմ , կը յուսամ որ անանկ երջանիկ օր
ալ պիտի ըլլայ՝ որ անիկայ դուն քու ա-
չօքդ տեսածի պէս ալ պիտի ըլլաս ու հա-
ւատաս , որ ինէ էւել քեզ սիրող մարդ
չունիս . ողջ եղիք :

ՆՈՅՆ ՆՏԻԹԻԿ ՎՐԱՅ ՈՒՐԻԾ ԲԱՐԵԿԱՄԻ

Աղնիւ Խալեկամ:

Աղնեսնութիւնը լսելով բարեմաղթութիներ ընելու արջափ մեծ փափար ունեի նէ , առ օրվան օրս՝ անոնք կատարվելուն համար ալ այնչափ կուրախամամ: Գիտես թէ աճ շատոնցներ ՚ի վեր քեզի կը փնտրուեր , կամ քեզի արժան ընկերմը՝ քեզի կը պատրաստեր . վերջապէս՝ ձեզ իրարուարփու , երկուքդ ալ հիմայ երջանիկ էք : Ուստի ասանկ երկու ընտրեալ սրախն միաւորութեն արջափ օրհնութիներ պիտի յառաջ գայ նէ՝ ալ դուք ինքիրեննուգ գիտեք . ողջ եղիք :

ԿԻՆ ՄԸ ՀԱՐՈՒՏՍ ՄԱՐԴՈՒ ՄԸ ՀԵՑ ՆՈՐ
ԱՄՈՒՄՆԱՑԱՃ ՈՒՐԻԾ ԿԿԿԱՆ

Ետղելի Ջեկին:

Եւանդութես պատճառուաւ առւնը ցալուս , ներէ որ առ քեզի արժան ու շահաւոր միաւորութել համար զգացած-

Հաճութիս քեզի գրով իմացունեմ։ Ա՞չ
 բոլոր առաքինութիներով քեզ զարդա-
 րեր էր, հիմնյալ հարստութիւ արվաւ։
 Ինչու որ քենէ մէկ ուրիշը՝ քեզի չափ
 անիկայ աղէկ չէր կրնար գործածել։
 Ինկէ ՚ի զատ, քեզի անանկ ընկեր մըն ալ
 արվաւ որ՝ հազար ու մէկ բարի բնաւո-
 րութիներով զարդարված է՝ ու քու վրադ-
 ալ կատարեալ սէր ունի։ ահա աս պար-
 գել գին չունի։ Արդարեւ անոր քու
 վրադ սէր ունենալը՝ յայտնի բան է, ին-
 չու որ առաքինութեւ շահերը՝ ձեռք բե-
 րելու համար, հարստութեւ շահերը աղէկ
 շահեց։ Ինչուշտ ած ձեզի պէս ասանկ
 երկու ընկերները՝ պիտի օրհնէ, որ մի
 միայն սիրոյ համար միացան։ Ձեր վրայ
 ունեցած սէրս՝ յաւիտեան պիտի ըլլայ,
 ու կը յուսամ որ փոխարէն դուք ալ ձեր
 կողմանէ ինծի պիտի նմանիք։ ողջ եղիք։

ԱՆԴՐԱՆԻԿ ԶԱՒԿԻ ՃԱՆԴԵԱՆ ՀԱՄԱՐ

Բարեկամ։

Արելի կնոջուր որդէծննդեան լուրը՝
 իս շատ ուրախացցյա։ Արիկայ օրհնութիւ

մը նէ որ ած իր ուղածին կուտայ, ու ա-
նոր համար մենք տւպէտք է որ իրմէն շատ
շնորհակալ ըլլանք : Ո՞չ երանի թէ ձեզի
պէս, իրենց զաւակները աղէկ կըթելու
եղանակը գիտցող, ու իրենց հարստութէն
՚ի զատ՝ առաքինութինին ալ անոնց ժա-
ռանդ ձգող ծնողքները շատ ըլլային :
Ձեզի շահմը ըլլայ նէ՝ ես միշտ կուրա-
խանամ, և մինչեւ ՚ի մահալ անանկ պիտի
երթամ : ողջ եղիք :

ԶԱՒԿԻ ՃՆՆԴԵԱՆ ՀԱՄԱՐ

Պարոն :

Եզի զաւակ մը ծնելը լոելով շատ
ուրախացայ : Վու առաքինութիներուդ
ուրիշ յաջորդ մըն ալ պատրաստվել, ձեզի
պէս ուրիշ մըն ալ ծներէ՝ լսելէ : Իսոր
համար աշխարհք անշուշտ պիտի ուրա-
խանայ : Իս գիպուտածը աղէկ պատեհու-
թիւն մընէ՝ որ ձեր վրայ ունեցած յարգս
կրկին յայտնեմ ու անկեղծութեանս վրայ
ձեզ ապահով լնեմ : ողջ եղիք :

ՀՕԲ ՄԸ ԻՐ ՈՐԴԻՈՅՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ
ՎՐԱՅ

Բարեկամ:

Օ աւակիդ հարսանեացը վքայօք տը-
ված լուրէդ աւելի ուրախութե լուրչէր
կրնար ըլլալ ինծի աշխարհիս մէջ։ Ձեզի
եղած բաներուն վքայ սիրտ չի տաքցնելը՝
ինծի անհնար ըլլալով, հիմակվան ունե-
ցած ուրախութեանդ մասնակից չըլլալ
չեմ կրնար ընել։ Աը յուսամ որ, տասնկ
կարեռը կտորի մը մէջ՝ ցըցուցած սիրոյ և
բարեսրտութեան նշաններուդ փոխարէն՝
զաւակիդ ալ իր պատւոյն արժան եղած ե-
րախտագիտութիւն՝ ձեռքէ չի պիտի ձգէ։
Ե՞ֆ տար որ մինչեւ մահուան օրդ՝ անկէ-
գոհ մնացիր, ու աս լուրը ինծի տալով իս
ինչպէս որ ուրախացուցիր նէ՝ անանկ ալ
կրկին շնորհք ընէիր ու հաւատայիր՝ որ
ես մինչեւ յաւիտեան մի և նոյն սիրով ու
անկէղծութիւնվը պիտի մնամ, ողջ եղիր։

ՀՕՐ ՄԸ ԻՐ ԱՎՋԿԱՆԸ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆԸ
ՎՐԱՅ

Բարեկամ:

Պաղելի աղջկանդ ամուսնութել վրայ
հիմակ ես ալ ձեզի չափ կուրախանամ . կը
ցանկամ որ իր արժանեացը չափ ած անի-
կայ երջանիկ ընէ . և արդարեւ անիկայ ինչ
բանի արժան չէ : Եւ որովհետեւ ած ա-
ռաքինին անվարձք չեթողուր , անոր հա-
մար աներկըսյ գիտեմ՝ որ գուք անոր եր-
ջանկութիւն տեսնելով շատ պիտի ուրա-
խանաք . ողջ եղի՛ր :

ՊԱՏԱՍԽԱՆ

Հանկալի Բարեկամ:

Ու աւակիս ամուսնութել վրայ ինձի
գրածներէդ հասկըսյ , որ ինձի պատա-
հած բաներուն վրայ , սիրտերնիդ էւելօք
կըտաքցընէք : **Ը**ստ շնորհակալեմ ձե-
նէ , և կաղացէմ հաւատացէք , որ եթէ
պատեհութիւմը իյնոյ՝ ու ես ալ իմ կող-

մանես ձեր Երջանկութեր վրայ նոյն սիրովը ըլլալը ձեզի խմացունեմնէ , էւելօք պիտի ուրախանամ . ողջ Եղբէր :

ՀԱՆԱՊԱՐՃՈՐԴՈՒԹԵՆՔ ՄԸ ՈՂ.Ճ ԱՌՈՂ.Ճ
ԵՏ ԴԱՐՁՈՂ.Ի

Բարեկամ:

Ողջ առողջ դառնալուդ վրայ շատ էւելօք ուրախ եմ , և աս ուրախութիւն՝ մինչև հիմայ ձեզի խմացուցած կըլլայի . բայց որովհետեւ դուք հիմայ ճամբէ եկեր էք , շատ նեղութիւններ քաշեր էք , ձեզի հանգստանալ պէտք է . անոր համար ինք զինքս բռնեցի , որ արգելք մը ըսլամ : Փառք ոյ որ կրկին ձեռվրնիս անցար . բարեկամներդ ու մանաւանդ ես՝ ամմէն օր աստուծմէ աս միայն կըխնդրէինք : Եւ դուն ինչպէս որ կրկին առջի սրտովդ դարձար նէ՝ կաղաչեմ որ իմինիս ալ չե փոխվելուն ու մանաւանդ առջի սիրոյս էւելնալուն հաւասար . ողջ Եղբէր :

ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆՏ ՆՈՐ ԵԼԱԾ ՄԻԿՈՒՄԸ

Վնձկալի Բարեկամ:

Աս Երկար հիւանդութեղ ժամանակը՝
որքափ վախ ու տագնապ քաշեցի նէ՝ հիւ-
մակվան ըռընտնալդ ալ լսելով՝ այնչափ
եւելօք կուրախանամ: Վառ առողջութեղ
վրայօք հիմա ինծի զգուշացիր ըսել չե-
վայլեր, որովհետեւ նցն ինքն զգուշութիր՝
դուք էք սակայն բարեկամութես պարտ-
քըն է որ պէտք եղած ին չափ ինքը զինք-
նուդ նայելու համար ձեզի պատուիրեմ:
Օր օրի ուժ պիտի առնէք, խոհեմաքար
գործ ածեցէք, որ մենք ալ քիչ ատենին
մէջ՝ ձեզ առջինին պէս ողջ առողջ տես-
նանք: Խաէ որ տա ցաւերը՝ քեզի քաշել
չի ատլը՝ մի միայն փափաքելով ըլլըմէր նէ՝
անշուշտ խին ըրածներովս՝ ամմենեին
հիւանդանալու չէիր ողջ եղիր:

ՊԱՏԱՍԽԱՆ

Բարեկամ:

Առողջանալուս վրայ ցըցուցած բարեկամական նշաններուդ համար ձենէ որչափ շնորհակալ ըլլամնէ՝ քիչէ։ Արդարեահա ուժու օր է օր կէւելնայ ։ բայց ձեր խոհեմիրատը չի մոռնալով անիկայ զգուշութեամբ կը գործածեմ։ Ամէն բանէն էւելուտելու ախործակս չափաւորելս է, որովհետեւ անանկ սաստիկ է որ գիտես թէ աշխարհք պիտի կը լլեմ։ Ինձի համար ըրած բաղջանքներեդ շատ շնորհակալ էմ, ու անոնց փոխարէն կը ցանկամ, որ ես ալ ապերախտ չըլլու՝ քեզի իմացունելու կարօղ ըլլամ ։ ողջ եղիք։

ՆՈՅՆ ՆԻՒԹԻՆ ՎՐԱՅ ՈՒՐԻՇ ԲԱՐԵԿԱՄԻ

Քանիկալի Բարեկամ:

Ո՞ւէ որ բարեկամներուդ վրայ ինչ կարծիք ունենալու չի գիտնայի՝ առողջանալուդ համար զգացած ուրախութիւնս՝

աղէկ մը քեզի կը նկարագրէի . բայց դուն
 ինքիրենդ ալ դիւրտւ կրնաս հասկնալ :
 Արդարեւ՝ բարեկամներուս պինտ ցանկա-
 լին՝ մահուան վտանգին աղէկութենէն
 աղատած տեսնալէս աւելի ինչ ուրախուի
 կըլայ ինձի : Աս կտորին հիմակ ես ինչ
 կըզգամնէ , քու սիրտդ քեզի կիմացընէ :
 Իրտւ որ առաջուց սէրերնիս որչափ իրա-
 րու հետ ամուր կերպով մը կապվերէրնէ՝
 աս վտանգը՝ որ քիչ մնաց անոնք իրարմէ
 պիտի քակէր . անոնք աւելի ամրցուց :
 Դուն առողջանալովու ես ալ առողջացած
 սեպվեցայ . քեզի եղած աղէկութիւն՝ ոյ
 ինձի ըրած շնորհքներուն պինտ մեծը կը
 սեպեմ : Աւ ասկէ ետև անկէ ըրած խըն-
 դիրքս միայն քեզ պահելն է , որ եթէ
 հնար է՝ քու բարեկամութենէդ չեղըր-
 կըվիմ . ողջ եղի՞ր :

ՊԱՏԱԽԻԱՆ

Բարեկամ :

Սրկած նամակդ՝ որ բարեկամութենդ
 կենդանի մէկ պատկերն է , սիրտս անանկ
 ուրախութիւնով մը լեցուց որ՝ առողջութես

մեծ օդնութիւնը պիտի կրնայ ընել։ Խմբն
առողջութե ցանկալս՝ միայն քու սիրոց
անարժան չըլալս քեզի փորձով ցըցունե-
լու համար է։ “Կամակիս կարձութեանը
ներէ”, ինչու որ գեռ ասկէ երկարը չեմ
կընար գրել։ ողջ եղի՛ր։

ԹԱԻՉԱԹ.Գ ՑԱՒԱԿՑՈՒԹԵԱՆ

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Այս կերպ նամակներուն մէջ, կորըս-
տեան տիրոջը ցաւին ։ սոսկ մասնակից ըւ-
լալմը կրնանք ցըցունել։ Եւթէ որ գրե-
լերներնուս մէջ հուատոյ Ճշմարտութիւ-
ներէն միսիթարելիք բաներ ալ գրենք՝ վը-
նաս չունի։ Պ րած կորուստնիս որչափ
մեծ ու կեանքերնուս որչափ հարկաւոր
ալ ըլլայ նէ՝ ոյ անհուն գաղափարը ըո-
լրովին կը ոչնչացընէ զանոնք ։ ու անոր
հետ մեր կտավելուն յաւիտենական չըլ-
լալս՝ մեզի յիշեցընելով մեզ կը միսիթարէ։
Ուէ որ կորսըլված մարդը արժանի է՝ անոր
վրայօք տիրոջը գովութիւն կրնանք գրել։
Բայց ասոր մեծ ճարտարութիւն ու փափ-

կութի կուղէ , անոր համար շատ չընելը
ընելէն աղէկ է :

ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ԻՐ ԿԵԿԱՆԸ ՄԱՀՈՒԱՆԸ
ՎՐԱՅ

Բարեկամ:

Ի բած կորստեանդ որչափ մեծ ըլլա-
լը գիտնալով . աս նամակըս քեզ մխիթա-
րելու համար չէ , հապա իմ արցունիքներս
ալ քուկիններուդ հետ խառնելու համար
կը գրեմ : Որին սուգն որ կը քաշես նէ՝
անիկայ իրեն վայլած առաքինութիններուն
ամնէնն ալ կատարեալ ունէր , որով շատ
պատուց արժանացեր էր : Վնիկ աղէկ
ընտանիքի մը մայր չէր կընար ըլլալ . անկէ
քաղցը ու անկէ սիրելի հարս չէր կընար
ըլլալ . իր համեստութին էր որ իր տունը՝
անանկ խաղաղութեն ու երջանկութեն տէր
էր ըրեր : Հաղարումէկ բարի բնաւորու-
թիւններ ունէր . և քեզ ալ ճշմարիտ սի-
րով կըսիրէր . որովհետեւ անոր բոլոր փա-
փաքն ալ քեզ մարդկանց մէջ ամնէննէն
երջանիկը ընելէր :

Պիտեմ որ տառնք գրելս՝ քու երած-

սիրտդ կըկին վըռընկցընելեն , բայց ա-
նանկ մէկ կսկիծ մը մոռցընելու համար՝
Ե՞նչ կընամ ըսել : Վենք ան մեռնողը՝ որ
մեղ այսչափ կսկիծի տէր ըրաւ , պարտա-
ւոր ենք գովելու ու լուսու . և անոր կո-
րստեանը վրայ . միայն մէկ բան մը կայ՝ որ
ան մոռմանք նէ՝ կընանք մխիթարյալ թէ .
աս թշուառ կեանքերնիս երկար չի կընար
քշել . մենք ուրիշ անանկ երջանիկ կեանք
մըն ալ ունինք , որ բոլոր բարեկամները՝
մշյմալ չի զատելու կերպով պիտի միացնէ :
Վեր յցուր աս է բարեկամն , քու՝ սուզը
բաշած անձգ՝ հոն պիտի գտնաս ու հոն
կըկին ստանաս :

Ուե՞ որ անկեղծ բարեկամութիւն մը՝
անսահման յարգեր ու պատիւներ՝ քու
երած սրտիդ կտոր մը գեղ կընան ըլլալ ,
գիտցիր որ ամմէն ժամանակ անոնք իմ
որտիս մէջ ոպարաստ են . ողջ եղի՛ր :

ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ՔՐՈՅ.Ը ՄԱՀՈՒԱՆԸ ՎՐԱՅ

Աիրելի Բարեկամ :

« Այսպելի քրոջու մահը իրաւ որ իս շատ
ցաւեցցի : Ես ալ քեզի հետ կը ցաւիմ .

ՃԵՌԵ քԵՂԻ ԵՂԱԾՆԵՐԸ ԻՆԾԻ աԼ ԵՂԱԾ-
ԱԵՎԵԼՈՒՄ ՀԱՄԱՐ , ՀԱՎԱ ԱՆԻԿԱՅ ԱՆԱԹԱՄՔ
ԿՐՃԱՆԾՆԱյԻ աԼ , ու արժանեացը չտփ աԼ
կը յարգէի : ԴԱՌՆ քու իմաստութիւնվդ՝
ու քաջութիւնվդ պէտք է որ քաղցին առ
հարուածին դիմանաս + ու մարդկային առ-
սանկ ձախորդութիւներուն մէջ՝ քեղ միսի-
թարելու չափ աԼ դուն բարեպաշտութիւ-
նիս : Աւստի ինծի մնացածը՝ քեղի
հաւատացընելէ թէ . ինչ որ քեղի պատա-
հինէ՝ միշտ ինծի Եղածի պէս կըսեպեմ+
ող Եղի՞ր :

ՀՕՐ ՄԸ ՈՐԴԻՈՅՆ ՄԱՀՈՒԱՆԻ ՎՐԱՅ

Բարեկամ :

ՔԵՂՍԻՐԵԼՈՒՄ Ու յարգելուս համար՝
զուակիդ կորուստը քեղի չափ ես աԼ կըս-
կըծացի : ՔԵՂԻ պէս իմաստուն ու քաջ-
մորդ կուզէ՝ որ ասանկ դժար փորձի մը
դիմանայ : Վրդարե մինչև հիմոյ հանդի-
պածներուդ պինտ մեծը աս է . բայց կը
յուսամ որ ան ձախորդութիւններէն՝ ոյ
կամացը հնազանդիլը՝ աղէկ մը սորվեր ես :
Ես իմ ձախորդութիւներուս մէջ աս մի-

Ջոյը կը գործ ածեմ՝ ու քու աս կոկիծիզ
մէջ կուղեմ որ դուն ալ ան գործածես։
ողջ եղի՛ր։

ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ՀՕՐԾ ՄԱԶՈՒԱՆՅ ՎՐԱՅ

Բարեկամ։

Պառ բարի հօրդ կորուստը՝ ինձի ալ
մեծ ցաւ տրվաւ, ու քեզի հետ ես ալ ա-
նիկայ կուլամ։ Խճապէտ ինքը գնաց, բայց
իր առաքինութիները ու բարի օրինակնե-
րը քեզի ձգեց որ անկորնչելի գանձեր են։
Կամասապէս՝ միշտ իմաստութե՛ վարվելմը՝
անստգտանելի կեանք ունենալ մը՝ ու ա-
նանկ բարի մեռնել մըն ալ ձգեց, որ Ճըշ-
մարիտ միխթարութիներ են։ Վատուծմէ
կը խնդրեմ որ՝ դուն ալ անոր պէս միշտ
բարեգործութե՛ մէջ գանըլիս։ և աղէկ
գիտնալով որ դուն՝ քու արժանեացդ կա-
տարեալ ըլլալուն՝ միայն հօրդ տարիքին
կը կարօտիս։ կուրախանամ քու զաւկընե-
րուդ հետ, որ դուն ի՞նչ որ հօրդ քով
տեսեր եիր ու կորուսիր նէ՝ անոնք քու
քովդ պատրաստ պիտի գտնան, ողջ եղի՛ր։

ԿԱԿԱՆ ՄՅ ԻՐ ԵՐԿԱՐ ՄԱԶՈՒՄՆ ՎԵՐ

"I, William Elliot, husband:

|| լորսընցուցած ո՞նձերնիս իմ բարեկամն էր , ու անոր բարեկամութե փորձերը՝ ժամանակ ժամանակ ինծի ըրած բարերարութիւններէն յայտնի տեսեր էի . ուրեմն ինչպէս ես ալ չելամ : Այսուամենայնիւ եթէ ցաւս քիչ մը թեթևեցընելու բան մըն ալ կայ՝ ան ալ անշուշտ իր առաքինութիւններուն յիշատակը՝ ու ոյ արդարութելը վրայ անոր ունեցած յոյսն է . և անհնար բան է որ առաքինիներուն պահված երջանկութիւն՝ հիմայ անիկայ չեվայելէ : Արդարեւ այն շնորհքին ո՞վ անկէ եւել իրաւունք ունի : Ասոր ճշմարիտ ըլլալը՝ դուն ամմէնէն աղէկ գիտես . որովհետեւ շատ ժամանակէն ՚ի վեր անոր ըրած գործքերը կը տեսնէիր : Կանէ ասոնք մըտմըտալու՝ քիչ մը միտթարվինք , ու մեզ արարչին կամացը յանձնենք , որ մեզ աստնկ կոկծցունելու ատենն ալ սիրով պաշտելու պարտաւոր ենք : Աս կսկիծները՝ որ կեանքերինուս ընթացքը զգալի կերպով մը կը փոփոխեն , մեղի մեծ մեծ խրատներ են .

ասոնցմով մենք այն օրհասական ժամէն չենք
 վախճանալ մը կը սուրվենք, որ օր մը չէ նէ օր
 մը՝ մեղ պիտի գայ կոխէ, ու մեղ աս պահ-
 ութիստութեան աշխարհէն պիտի հանէ :
 Աս կորսնցուցած սիրելի անձերնիս . կը կին
 պիտի տեսնանիք, և ասիկայ անանկ յցս մը
 նէ՝ որ ած իր ստեղծած զգայուն մար-
 դոցը ձգեր է : Աս ալ մտմտալու է, որ աս
 ցաւերուդ քաջութեամբ տանելու՝ միայն
 քրիստոնէական ոք պարտքերը չեն քեզ
 պարտաւորողը՝ նաև քու անձիդ փափ-
 կութեր համար ալ աս բանին պիտի ջա-
 նաս . զաւակներդ քենէ ուրիշ ալ մէկը չու-
 նին, ու դուն ալ ինքը զինքդ անոնց տա-
 լու ես : Աս մատաղ տունկերը մշակէ .
 քեղի պէս առաքինի սիրտ ունեցողի մը՝
 ասկէ գեղեցիկ ու ասկէ քաղցր մխիթա-
 րութիւն մը չի կրնար ըլլալ : Ասոնք՝ իրենց
 հայրը ամենեին մնաքէդ չհանելու յիշա-
 տակներ պիտի ըլլան քեղի, որ թէպէտ
 ասկէ պիտի ցաւիս . բայց ան ցաւերը քե-
 ղի վնաս մը չունենալէն ՚ի զատ, անոնց մեծ-
 օդուտ պիտի ունենան : Աս քու պատ-
 ուական երկանդ բարեկամն էի . իմկեանիքս
 անորինին տեղը կուտայի . հաճէ համեստ
 ամեկին՝ որ քեղի ու քու զաւակներուդ ալ
 իցն սիրովը նոյիմ, ողջ եղիր :

ՅԱՐԴՄ ԲԱՅՐԵԿԱՄ:

Վամակդ ինծի հասած ժամանակը
թէ որ մխիթարվելու վիճակի մէջ ըլլայի,
անշուշտ անով պիտի մխիթարվէի . բայց
անիկայ ինծի նոր արցունքներ թափել
տրվաւ, ու սիրտս ալ բնաւ չեկրցաւ իջե-
ցունել: Իմ թշուառ տանս վրայ ցըցու-
ցած բարեկամութեղ համար՝ որչափ ու-
րախացայ նէ՝ չեմ կրնար ձեզի յայտնել:
Վեծապէս շնորհակալեմ: և ինչպէս որ
սիրելի տէրս ձեզ մասնաւոր կերպով մը
կը յարգեր նէ՝ տանիկ ալ ձեռքէս եկա-
ծին չափ զաւակներուս պիտի սորվեցընեմ
որ նոյն կերպով հօրելնուն այս պարտքը
չե մոռնան: ողջ եղի՞ր:

ՀԻՒԱՆԴԻ ՄԸ ՄԽԻԹԱՐԵԼՈՒ ՀԱՄԱԲ

ԲԱՅՐԵԿԱՄ:

Վու հիւանդութեանդ լուրը՝ ինծի
այնչափ աւելի ցաւ տրվաւ՝ որչափ որ իմ

Գործքերը իս հոս գերիի պէս արդիլե-
լով թողչեն խտար որ անիկայ գամբեր-
նով քեզի իմացունեմ, որ քիչ մը թեթև-
նայ: Կաղաչեմ սիրելիս, քանի որ կրնաս
առողջութեղ լուրերը ինձի իմացներ, որ
գոնէ քիչ մը հանգստանամ: Եկածը գա-
րունէ, անշուշտ քեզի պիտի օգնէ. և կը
յուսամ որ քիչ ժամանակի մէջ աղեկ
պիտի ըլլաս: ողջ եղի՛ր:

ՊԱՏԱՍԽԱՆ

Ինկեղծ Բարեկամ:

Իւանդութես վրայ սիրտդ կը ցաւ-
ցընէս: շատ շնորհակալեմ հրամանքեղ: ու
ըսածիդ պէս հիւանդութիս ալ սկսեց
կամաց կամաց տկարանալ: Գիտես թէ
օդը օրի բարեխտունելով ինձի աւելի
օգուտ կընէ: բայց տակաւին շատ տկաց
եմ: ուստի տոկէ երկար չի կրնալ գրե-
լուս ներէ ու ողջ եղի՛ր:

ԶԱԽՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻԳՈՂ ՄԻԿՈՒՆ

Բարեկամ:

Վ'դ ձախորդութիւն իմ գլուխս եկած
ըլլար նէ՝ ասկէ առելի ցաւ չէր կընար
առալ ինծի: Բայց ես աղէկ գիտեմ՝ որ
ասանկ ձախորդութիներուն անհանգըս-
տութիւնը չըլայ նէ, անոնց՝ շահերնուգ
տված վնասները՝ որչափ մեծ ըլլան նէ՝
հոգդ չես ըներ: Աենք ամմէնքս աւ բաղ-
դին հարկատու կը ծնինք, և ով որ աս
պարաքը ժամմը առաջ վճարէ նէ՝ պինտ
երջանիկը կը սեպիի: Քոյս ունիմ որ մենք
աւ աղատեցանք, ու ասկէ ետեւ առելի եր-
ջանիկ պիտի ըլլանք: Օմէ որ ած ուզած-
ներս կատարելու ըլլայ, անշուշտ քու
ձեռնարկութիւններդ ասկէ ետեւ առելի
պիտի յաջողին: ողջ եղի՛ր:

ՊԱՏԱՍԽԱՆ

Բարեկամութե՛ն մէջ՝ Ճշմարիտ սրացա-

ւութինէն առելի քաղցր բան չի կայ . և
անոր պինտ մէծ փորձն ալ , սիրած մար-
դերնուս ձախորդութե՛ը մասնակից ըլ-
լան է : Խմ անյաջողութիւններուս վրայ
ցըցուցած կոկիծդ՝ խմկոկիծներուս կէսը
թեթևցուց , ու մէկ ալ կէսն ալ համբե-
րութե՛ք տանելու՝ ինծի մէծ օգնութիւն
մը տըլաւ . ողջ եղի՛ր :

ԹՈՒՂԹՔ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԵԱՆ

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Վ ս տեսակ թղթերու մէջ մասնաւորա-
պէս խոհեմութի ու չափաւորութի կուղէ :
Թաէ որ բնական անզուսպ ազատութիով ,
ու բոլորովին ոխերնիս առաջ տանելով
գրելու ըլլանիք՝ շատ անգամ նամակը առ-
նելիք մարդուն հետ՝ մէյմաւ չի հաշտը:

լու կերպով կավավինք։ Խօսակցութեան
մէջ էւել պակաս խօսվի նէ՝ այնչափ հոգ
չէ, որովհետեւ կը մոռցը վի։ ու շատ անդամ
իրարմէ դեռ չի զատված ըլլալովալ կը
հաշտը վին։ բայց գրվածը չի մոռցը վեր,
մարդուն սրտին աւելի կաղղէ, կը կին
կրկին կը կարդան, ու կերպ կերպ մեկնու-
թիներ տալով սրտերնուն կոկիծը կը նան
նորոգել։ Ուստի տամակ նամակ մը գրե-
լու ժամանակը՝ նաև գրվելիքներուն վրայ
մոմտալու է՝ ու օր մը ետև ձգելը՝ միշտ
աւելի աղէկ է։ Իւրինին եկածը անանկ
անխորհրդաբար գրելուն մէկ միասնալ,
Դիմացիններնուս ալ իր ուղածը ըսելուն՝
իրաւունք մը տալէ, և տամակով շատ ան-
դամ մեր սիրտը՝ անոնցմէ էւել կը կսկծէ։

Տեսակ մը յանդիմանութիւն ալ կայ՝ որ
այնչափ խոհեմութիւն ուղէր. բայց անիկայ
միայն բարեկամի մը ըլլայ նէ՝ կը լլայ, երբ-
որ կը նայինք որ մեղ մունալու պէս կը լ-
լսն, նամակ չեն գրեր, կամ մեղի ձանձ-
րութիւն կը լլայէն վախնալով լուռ կը կե-
նան. այն ժամանակը թեթև կերպով մը
անոնք յանդիմանելու է, քիչ մը սրտեր-
նուս նեղանալը ցըցունելով. բայց ասոնց
